ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դասախոսի թափուր տեղի համար՝ հետևյալ առարկաների (մոդուլների) գծով.

1.«Հայոց լեզու» 1 դասախոս

2. «Հայ գրականություն»

1.«Ռուսաց լեզու 1 դասախոս

1.«Կենսաբանություն» 1 դասախոս

1.Քիմիա 1 դասախոս

Մրցույթը տեղի կունենա 2025թ. օգոստոսի 20-ին, ժամը 10:00-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցե՝ ք.Վանաձոր, Հերացի 11:

1.Ֆլեքսո տպագրության տեխնոլոգիա և մեքենաներ 1 դասախոս

2. Գրքի տպագրական և կազմարարական աշխատանքներ

1.Ուսումնական պրակտիկա՝ կանացի կիսաշրջազգեստ, մշակում 1 դասախոս

2. Ուսումնական պրակտիկա՝ անդրավարտիքի մշակում

Մրցույթը տեղի կունենա 2025թ. օգոստոսի 20-ին, ժամը 12:00-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցե՝ ք.Վանաձոր, Հերացի 11:

1.Կիրառական տնտեսագիտություն և գործարար հմտություններ 1 դասախոս

2. Անձնակազմի կառավարում

1.Ապրանքների ճանաչողության հմտություններ 1 դասախոս

2. Ապրանքագիտության հիմունքներ

Մրցույթը տեղի կունենա 2025թ. օգոստոսի 20-ին, ժամը 14:00-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցե՝ ք.Վանաձոր, Հերացի 11:

Թափուր աշխատատեղին ներկայացվող պահանջներն են՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներ
- Դիմորդը պետք է տվյալ բնագավառում ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և(կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ
- Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար բարձրագույն մասնագիտական կրթությունը և մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է

Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով՝ յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Հարցաշարը կազմում է հաստատությունը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև1)
- Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ (բնօրինակը և պատճենը))
- Անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը)
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն (Ձև4)
- Մեկ լուսանկար 3X4 չափի
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը)
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. օգոստոսի 2-ից մինչև 2025թ. օոստոսի 15-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-16:00:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 4-38-26 հեռախոսահամարով: